ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԳԲՔԱ-LO-2021/17 ծածկագրով
ընդունված որոշման կատարման մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացվել է բողոք:

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

Բողոքներ քննող անձին «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 09.03.2021թ.-ին:

09.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 համարի ծածկագիրը:

«Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացվել է համանման բողոք:

Բողոքներ քննող անձին «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 16.03.2021թ.-ին:

17.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 համարի ծածկագիրը:

18.03.2021թ.-ին՝ ներկայացված բանավոր միջնորդության հիման վրա «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

18.03.2021թ.-ին, 25.03.2021թ.-ին և 08.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2021թ.-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.04.2021թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 որոշմամբ որոշել է՝

1. «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և ընդունել գների նվազեցման նպատակով միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ որոշում:

3. «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի:

4. Դադարեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ.-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով և 04.03.2021թ.-ի թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժնի «ա» կետով կայացված որոշումները:

5. Մնացած մասով համանման բողոքը մերժել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կայացված իրավապարտադիր որոշման կատարման մասին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru